

# ԺՈՂՈՎՐԴԻ ՉԱՅՆԸ ՄԵԾ 'ՍՏԱԼԻՆԻՆ

(ՆԵՐՐՈՂ ԼԻՐԻԿԱԿԱՆ)

Մեր ձայնը բե'զ, մեր ձայնը բե'զ, Դու առաջնորդ մեր լուսավետ,  
վոր գնում ես անմահուիշ-յունն ու յերկիրն ես տանում քեզ հետ.  
Քեզ, վոր մեր վառ յերկինք սրտուս արեվ անունդ ենք փայլախում,  
Դու մեր կյանքի ծաղիկներին, արեվից ել ջերմ ես նայում...

Մ'եր ձայնը բե'զ, մեր սիրտը բե'զ, քե'զ. վոր անհուն կյանքն ես ցողում  
Անմահական սրտիդ ցողով, ուր արեվի շունչն է խաղում,  
Քե'զ. վեր լուսե ավեր հանիր դարերեկված կյանք-նավը մեր,  
Ու գնում ենք յերամ կապած, գրահ կազած սուրում ենք վեր:

Վեր ենք գնում քեզ հետ մնում հավերժ հզար ու անբաժան,  
Մ'եր աչքն՝ արե'վ, ու մենք գարուն հայրենիքում մեր սրբազան,  
Ուր ծաղկում են ժայռերն անգամ, ուր մանուկն է առնում քեքեր,  
Ուր լցված են յերջանկուրթամբ կռիվ ու գործ, յերազ ու սեր:

Ուր, քվում ե, քե չեն անցնում գարունները ծաղկահանդես,  
Վոր մեծ սրտիդ ակունք առած մեզ են գալիս, գրկում են մեզ,  
ու քո շունչն ենք առնում վարդից, մանուշակից, մեխակից գով,  
Ու հզոր ենք դառնում քեզնով ինչպես գարնան հողն՝ արեվով:

Ուր անունդ է թնդում զվարթ, ուր քո շունչն է ծփում անմահ,  
Այնտեղ դարն է վայրկյան քվում, ու ցնդում են քալիժ ու մահ,  
Այնտեղ վոսիկ արեվ կա միշտ, այնտեղ ծովն է սիրո, կյանքի,  
Այնտեղ բյուրեղ աղբյուր ու գետ, լույսն են բղխում մեր վայելի:

Մեր աշխարհի աղբյուրները քեզ ձայն տվին լեզու առած,  
Մով յերկնից լույս-աստղերը քեզ ձայն տվին խմբեր կազմած,  
Ծաղիկները նվիրական լեզու առան, քեզ ձայն տվին,—  
Ասին՝ մեր էլ ձայնն ենք տալիս Մեծ ՍՏԱԼԻՆ— Մեծ Արեվին:

Մեր ձայնը քեզ, մեր սիրտը քեզ, Դու առաջնորդ արևազուն,  
Մեր ձայնը քեզ, մենք քեզ հավերժ դարերի կյանքն ենք յերազում,  
Տա'ր մեր նավը գալիքը լույս այս խնդուր-յան անհուն ծովով,  
Թող սլանանք ամենուրեք քո հրեղեն մտքի քեվով...